ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 սեպտեմբերի 2023 թ. թիվ 9 /1817/

15. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մրցանակ սահմանելու մասին

ՀՀ ԳԱԱ նախագահությունը որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մրցանակ (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ մրցանակ) հետևյալ բնագավառներում.

1) ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ,

2) քիմիա, կյանքի և Երկրի մասին գիտություններ,

3) հասարակական և հումանիտար գիտություններ։

2. Սահմանել, որ.

1) ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների, քիմիայի, կյանքի և Երկրի մասին գիտությունների բնագավառներում շնորհվում է ՀՀ ԳԱԱ երկուական մրցանակ՝ հիմնարար և կիրառական հետազոտությունների ոլորտներում, հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում՝ մեկ մրցանակ,

2) ՀՀ ԳԱԱ մրցանակը շնորհվում է երկու տարին մեկ անգամ՝ տվյալ բնագավառում նշանակալի ավանդի կամ կարևորագույն կիրառական արդյունքների համար։ Մրցանակին կարող են ներկայացվել այն աշխատանքները, որոնք առաջին անգամ հրապարակվել, ներդրվել կամ կատարվել են ՀՀ ԳԱԱ մրցանակ ստանալու համար հայտերի ներկայացման ժամկետին նախորդող հինգ տարիների ընթացքում,

3) ՀՀ ԳԱԱ մրցանակները յուրաքանչյուր բնագավառի համար շնորհվում են համանուն վկայագրի և դրամական պարգևի ձևով։ Յուրաքանչյուր մրցանակի համար դրամական պարգևի չափը կազմում է հինգ միլիոն ՀՀ դրամ,

4) ՀՀ ԳԱԱ մրցանակների մաս կազմող դրամական պարգևները հատկացվում են «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային անադեմիա» ՈԱԿ-ի արտաբյուջետային միջոցների հաշվին։

3. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային անադեմիայի նախագահին՝

1) մեկամսյա ժամկետում հաստատել ՀՀ ԳԱԱ մրցանակ շնորհելու կարգը,

2) երկամսյա ժամկետում հաստատել ՀՀ ԳԱԱ մրցանակի հայցման աշխատանքների գնահատման կարգը։

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ա.Ս.ՍԱՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.Մ.ԻՇԽԱՆՅԱՆ